



**ՔԱՂՎԱԾՔ**

<<Արեգնադեմի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ի կառավարման խորհրդի 31.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին խորհրդի 7 անդամներ, բացակայում էր 1-ը հարգելի պատճառով:

Օրակարգում <<Արեգնադեմի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին / զեկուցող՝ խորհրդի նախագահ Մ. Հովհաննիսյան /

Զեկուցողը նշեց, որ ըստ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ / ՆՇԱՆԱԿՄԱՆ / ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ 2010թվականի մարտի 4 թիվ 319-Ն որոշումով հաստատված կարգի դրույթների՝ անհրաժեշտ է հայտարարել մրցույթ գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար:

Ելնելով վերոհիշյալ ից՝ <<Արեգնադեմի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ի կառավարման խորհրդի նիստը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. ՀՀ Շիրակի մարզի <<Արեգնադեմի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել մրցույթ:
2. Մրցույթն հայտարարելու մասին խորհրդի որոշումը եռօրյա ժամկետում ներկայացնել տարածքային կառավարման մարմին:
3. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակել [azdarar.am](http://azdarar.am)-ում/11.06.2019թ./ և զանգվածային լրատվամիջոցներով /13.06.2019թ./ :
4. Մրցույթն անցկացնել Արեգնադեմի միջնակարգ դպրոցի շենքում 2019թ. հուլիսի 26-ին:
5. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ՝ Մ. Հովհաննիսյանի վրա:
6. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել 2019թ. հունիսի 18-ից մինչև հուլիսի 17-ը ներառյալ:  
Որոշումն ընդունվեց միաձայն՝ 7-կողմ, 0-դեմ ձայներով:

Կառավարման խորհրդի նախագահ՝ /Մ.Հովհաննիսյան/  
Քարտուղար՝ /Ա.Հարությունյան/

Իսկականի հետ ճիշտ է՝



/Մ.Հովհաննիսյան/

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր): Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
  1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
  2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
  3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) պատճենը
  4. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
  5. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
  6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2019թ. հունիսի 18-ից մինչև հուլիսի 17-ը ներառյալ՝ ամեն օր ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 15<sup>00</sup>, բացի ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2019թ. հուլիսի 26-ին՝ ՀՀ Շիրակի մարզի «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Արեգնադեմ 16փ. 2/1) կամ ՀՀ Շիրակի մարզի «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ /հեռ. 098-79-55-01 /:

ՀՀ Շիրակի ՄԱՐԶԻ

«ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

31.05.2019թ.